3-ՐԴ ԿԱՐԳԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄՐՑԱՇԱՐ

26.05.2026 - 03.06.2026

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Անցկացման վայր.

ք. Երևան, Խանջյան 50, «Տ.Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոց»:

Մասնակիցներ.

Մասնակցում են բոլոր 4-րդ կարգ ունեցողները:

Մրցակարգ.

- Շվեյցարական մրցակարգ, 8 խաղափուլ:
- 8 հնարավորից 6 միավոր վաստակած մասնակիցներին կշնորհվի 3-րդ մարզական կարգ:

Ժամակարգ.

40-ական րոպե պարտիայի համար, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

- **Անհարգելի բացակայության դեպքում մասնակիցը կհեռացվի մրցաշարից:**
- **Խաղասկզբի համար սահմանված ժամից 30 րոպեից ավելի ուշացած խաղացողը պարտվում է:**

Խաղացանկ.

26 մայիս	1-ին խաղափուլ	ժ. 15.00
27 մայիս	2-րդ խաղափուլ	ժ. 15.00
28 մայիս	3-րդ խաղափուլ	ժ. 15.00
29 մայիս	4-րդ խաղափուլ	ժ. 15.00
30 մայիս	5-րդ խաղափուլ	ժ. 15.00
31 մայիս	6-րդ խաղափուլ	ժ. 15.00
01 հունիս	Հանգստյան օր	
02 հունիս	7-րդ խաղափուլ	ժ. 15.00
03 հունիս	8-րդ խաղափուլ	ժ. 15.00

Մուտքավճար.

Մրցաշարի մուտքավճարը 3000 դրամ է:

Գրանցում.

Գրանցումը կատարվում է Շախմատի հայկական ասոցիացիայի պաշտոնական կայքէջի միջոցով՝ https://chessassociation.am/web/home-page

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Գրանցման վերջնաժամկետն է մայիսի 25-ը՝ ժամը 16.00-ն: Դրանից հետո Կայքէջում գրանցումն ինքնաբերաբար (ավտոմատ) փակվում է:

Այն մասնակիցները, ովքեր հարգելի պատճառներով պայմանավորված չեն գրանցվել մինչև վերջնաժամկետը, կարող են գրանցվել՝ վճարելով 20% հավելավճար (3600՝ երեք հազար վեց հարյուր դրամ) հետևյալ հաշվեհամարին:

«Շախմատի հայկական ասոցիացիա» ՀԿ

“ԱՐԱՐԱՏ” ԲանկԲԲԸ

Հ/Հ 1510006712982908

Նպատակը դաշտում նշել՝ 3-րդ կարգի մրցաշար, խումբ, անուն, հայրանուն, ազգանուն, ծննդյան ամիս ամսաթիվ, տարի,հեռախոսահամար, մարզիչ, դպրոց: